



# ՀԱՆԻՍ ՏԵՄՆՕՐԵԼՅ

ՇՐՋԱՆ ՎԵՑՆՄԱՆԵԼՅ

Բ. ՏԱՐԻ Գ. ՇՐՋԱՆ.

1862

ԹԻԻ 49.

ՆՈՅՆՄԲԵՐ 1

Ստորագրութիւնները շրջանին սկիզբէն կսկսին .  
 Վեցամսեայ գինն է իջմիրի համար . կամիկի 2 Գարդոն .  
 իջմիրէն դուրս . ծախքը աւելցին ջրայ 2 " "  
 Հանգիսիս վերաբերեալ որ եւ . իցէ նամակ տնօրէնին դիտի  
 ուղղուի .  
 Ստորագրութեանց տեղերն են .  
 Իջմիր . Հանգիսիս գրասենեակը . կիրիթ խան թիւ 3 .

Պոլիս . Պ . Մուսթեա Մամուրեան . Գաշճըշար խան . Թիւ 4  
 Փարիզ . Պ . Ա . Մուրապեան . Rue du Dragon, 26  
 Հաշեղ . Պ . Յ . Ս . Քիւրքճիանօֆ :  
 Ալեքսանդրիս . Պ . կարադեա Յակոբեան .  
 Գանիրէ . Պ . Շաւարշ Մշիխարեան  
 Նիւ-Եօրթ . Ամերիկա . Պ . Խ . Օսկանեան .

## ԲՈՒՆԵԿԸՆՈՒԹԵԱՆ ՆԵՎԵՏԿ ՄԲ :

Շարունակութիւն (1)

Բայց անօթութիւնը , այսպիսակիւր օղը և բիրազդի զրկումները անոր կեանքը կը մաշէին . իր բնականօրէն տկար կազմը աւելի խանդարուելով ծանր հիւանդութենէ մը բռնուեցաւ , և մազ մնաց բանտը պիտի ըլլար մահուան անկողինը . բայց Միլլիօ ազատեցաւ այս վտանգէն և կրցաւ համբերել մինչև 1830 Օգոստոսի առաջին օրը , ուր կը լրանար տասնամեայ բանտարկութիւնը :

Բսել թէ ի՞նչ ուրախութիւն կը պայ մարդ մը , երբ այսպիսի երանելի օրուան մը կը հասնի , անհնարին է : Հայրենիքէ , ծնողական գորովազուծ սէրէ և սրտակից ու համազօշտ բարեկամ .

նրէ զրկուիլ , 1 1/2 տարի հասարակ բանտի և 8 1/2 տարի կենսամաշ բանտարկութեան ( car-cero duro ) մէջ մնալ , արևուն լըյտը չը տեսնել , դիր գրել ուղեւ և մեքան չգտնելով երակներէն արիւն հանել , ծնողքներէ նամակ ընդունիլ և բացած ժամանակ հօն " ողջ առողջ ենք , զքեզ կը բարեհե՛ք " խօսքը միայն կարգաւ , և նամակին միւս ամէն տողերուն սրբուած ըլլալը նկատել , և այս ամէն աուայտանքներու դէմ արիաբար զենիլ , և վերջապէս բռնութեան ճիրանէն ու մահուան մալիքներէն փրկուելով ազատութիւն գտնել , հայրենիք վերագտնալու և ծննդեան երկրին հողը կոխելու և արևը բարեկելու պատրաստուիլ , ո՛հ , այսպիսի անցքերու ենթակայ ըլլալու է մէկը որ հասկնայ թէ ի՞նչ է այն փրկաւէտ օրուան երանութիւնը : (1)

(1) Տես թիւ 38 .

(1) Մարդս ծննդեան երկիրը տեսնելու ժամանակ ա-



Սերվիս երբ հայրական տունը դարձաւ, ալ երկրային երջանկութիւնը մոռցաւ, և բոլորովին անդգայ ըլլալով կեանքի դիւրայոյժ ներդործութիւններուն, իր մնացորդ օրերը ընտանեկան և բարեկամական ընկերութեան մէջ անցուց: Խընամք, սէր, բարեկամութիւն, բան մը չէր սրահէր. այլ եկու նայէ որ Սբիէլպէրկի մահաշունչ օդը մինչև իր ոսկորներուն մէջ տարածուած և անոր կեանքը մաշած էր: Այս անընթէստ ցաւադարութեան և նիհարութեան մէջ օրուան մի կերկու ժամը ուսման տալով, Բնաբեր, Սարդոս պարբարոս-ի-ն-երը, Պարմալիս Երգեր և Ածեական Բանաստեղծոս-ի-ն-եր ըսուած գիրքերը շարադրեց:

Բնաբեր ըսուած գիրքը բոլոր Եւրոպայի մէջ տարածուեցաւ, և ամէնէն յուզակ պատասխանատուութեանէ, ամէնէն սաստիկ ամբաստանութեանէ և ամէնէն սաստիկ զարմանք տուող պարտադիրքէ մը աւելի համբաւ ունեցաւ. այն քաղցրաձայն բողոքը ամէն սիրտերը յուզեց: Տառապանները զայն կարգալով ոգի և զօրութիւն առին: Այս գրքին մէջ անթերի կը նշմարուի հաւատացեալի մը կրօնական զգացումները և սաւառնաթև երեւոյթութիւնները, անձնանուիրութեան անսման օրինակը և հայրենական սիրոյ նուիրական հուրը:

«Ուղեցի, կըսէ անիկա այս գիրքին համար, քաշած վիշտերուս և ամէնէն դառնային թշուառութիւններու մէջ ընդունած միսթարութիւններուս նկարագրութեամբը քանի մը անբաղձնեցու քաջասրտութիւնը զօրացնելու նպատակ: Ուղեցի հաստատել թէ երկարատե հալ և մաշ վիշտերուս մէջ լաւ մը իմացայ որ մարդկային ընկերութիւնը ոչ այնչափ անիրաւ, մեղագրութեան արժանի և առաքինի սիրտերէ զուրկ էր, ինչպէս սովորաբար կը նկարագրուի անիկա: Ուղեցի արամադրել վեհ և ազնիւ սիրտերը կարի յոյժ սիրելու և երբէք չատելու զմարդ. անհաշտելի սիս և վրէժխնդրութեան ոգի պահելու մի միայն այնպիսիներու գէմ, որք՝ նենդութեան, վատութեան և ուրիշ ամեն բարոյական արակոնութեան կենդանի օրինակ մ'են. վերջապէս ուղեցի կրկնել ճշմարտութիւն մը, աշխարհամանով՝ այլ շատ անգամ մոռցուած

ճշմարտութիւն մը, այն է թէ կրօնքը և փիլիսոփայութիւնը մեզ կը հրամայեն անքայքայելի կամք և հանգարտութիւն ունենալ դատի մի մէջ, և թէ անհնարին է արգարութիւն, արժանաւորութիւն և ոչ ալ ապահով սկզբունքներ ունենալ, եթէ այն երկու թէութիւնները միասեղ չունենանք:

Այս գիրքէն ետքը 'ի լլոյս ընծայեց Սարդոս պարբարոս-ի-ն-երը անունով երկասիրութիւնը: Հեղինակը կրօնքին ճշմարտութիւնը և կարգալուրութեան մը հարկաւորութիւնը անոր մէջ ապացուցանելէն ետքը, մարդուս զանազան պարտաւորութիւնները կը նշանակէ, և հայրենական սիրոյ վերայ գալով, կըսէ. «Հայրենիքը ճշմարիտ սիրով սիրելու համար կը պարտաւորինք անոր այնպիսի քաղաքացիներ տալ որք իրեն անարգանք չըլլան, այլ փառք: Կրօնքը, բարեպաշտական սովորութիւնները ծաղրել, և հայրենիքը արժանաբար սիրել երկու իրարու ներհակ բաներ են, այս՝ կը նմանի ճիշդ այն ներհակութեան, որն որ կայ յարդելի կին մը արժանաբար սիրելու և անոր հաւատարիմ մնալու պարտաւորութեանէ ինքզինքը ազատ կարծելու մէջ:

Այն մարդը որ եկեղեցին, ամուսնական սրբութիւնը, վայելչութիւնը և անբժութիւնը կ'անարդէ, և «հայրենիք, հայրենիք, կը պօտայ, ուստի հայրենասէր և վատ քաղաքացի է: Ճշմարիտ հայրենասէրը այն մարդն է, որ առաքինի սիրտ մ'ունի, և իր պարտաւորութիւնները կը ճանչնայ, կը սիրէ և յօժարակամ զանոնք կատարելու ետեէ կը լլայ: Օայնպիսին պէտք չէ շփոթել ոչ իշխանները շողորթութիւն հետ, և ոչ ալ ամէն իշխանութիւնը ռիսկալուրութեամբ բանադատողին հետ. վատօրէն խոնարհիլը և անվայել յանդուութիւնը չափազանցութեան աններկի յանցանք մ'է:

Հայրենասէր մարդը եթէ կառավարութեանէ թէ քաղաքային և թէ զինուորական պաշտօններ ընդունելու ըլլայ, իրեն պէտք է նպատակ ունենայ, ոչ թէ անձնական շահը, այլ իշխանին և ժողովուրդին պատիւը և բարօրութիւնը:

«Եթէ սոսկ քաղաքացի է անիկա, իր ամէնէն մեծ փափաքն է իշխանին և ժողովուրդին փառքը և երջանկութիւնը. այս երկու բարեմասնութեան հակառակ բան մը չընեն անիկայ, այլ ընդ հակառակն զայն աւելցնելու համար ձեռքէն եկածը կընէ: Գիտէ անիկա թէ ամէն ընկերային ժողովներու մէջ անիրաւութիւններ կան, կուզէ որ անիրաւութիւնները անհետին, բայց սարսափելով հեղի կը կենայ այն կատուութեանէ, որն որ զանոնք

Նանկ աննկարագրելի զօրութիւն մը կզգայ. որ անոր ամէնէն քաղցր յշտասակները և ամէնէն հեշտափ բողծանքները կարթնցնէ:



բարեկարգել կուղէ արիւնաբոյր վեժխնդրութիւններով և հարստահարութիւնով, վասն զի անիրաւութիւններու ամենէն ահարկունները և ամենէն աղէտալիները այս վերջիններն են:

Վերջապէս ճշմարիտ հայրենասէրը չք բողբեր, բնառանի կօխներ չը յարուցաներ, իր օրինակովը և խօսքերովը կրցածին չափ չափազանցութիւններու չափաւորիչը, ներողամտութեան և խողազութեան խրատատու կը ըլլայ: Միշտ իբր գոռնուկ կապրի մինչև այն օրը, ուր հայրենիքն ի վասնզի պաշտպանութեան հարկաւորութիւն կունենայ, ա՛նտան առիւծ մը կը դառնայ անիկա և կը պատերազմի յաղթելու: կամ մեռնելու համար:

Ար փափաքէինք առելի երկարօրէն խօսիլ այս առաքինի ու մրանգամայն ճշմարիտ հայրենասիրին վրայ, այլ ընթերցողաց ձանձրոյթ չտալու համար այսչափս բաւական կը համարինք:

ԸՄԸՍԻՈՅ (4) ՀՈՒՆՏԵՄՆԵՐԸ

Հայք կամ նախագոշարեալ է կամ անգուտառ .

Մարտի և Ռարիէ ԿՕՒանի վերջին թերթերուն մէջ Ամասիացի Հայ հոգեաես կնկան մը նըկամամբ յօդուածներ կարդացինք: Առ իմանալով որ մեր Ամասիացի եղբարքը անօգուտ աեղը կը յուզին և կը վրդովին, կը փութանք քանի մը առղով հոգեաեսութեան խնդիրը, որ յուզման շարժառիթն է, դիտութեան մեկնութեամբ պարզել յօդուտ հասարակաց դատողութեան:

Ինչ քան որ հնարին եղաւ հրապարակաթերթից անկատար նկարներէն տեղեկանալ, այս հոգեաեսութիւնը Մէսիքականաց լու ճանչցած և ոչ սակաւ պատահեզը բնական երեւոյթներէն մին է, որուն extase կըսեն դազդեարէն և որնոր շփոթելու չէ զտանցման հետ hallucination: Այսպիսի հետ միշտ կ'ընկերանայ նաև ընդարմացում (catalepsie) ըսուած ջղային անիմանալի ախար:

(2) Ըմասիա կամ Ամասիէն Ստանուի արեւելեան կողմը կիսայ 133 բիւզնթիւր հեռաւորութեամբ: հին իբն գետին վրայ սր հիմնայ եւէ ըբնաւ կը կըտուի: Ըստ հնութիւն կոչ հան, ու կըտուի նաև թէ Միհրդատի ու Մարտիանի հայրենիքն է: Սուլթան Սէլիմ Ամասիէն ծնած է:

Անդամացումը բաւանդակ մարմնոյ յանկարծական ու կատարեալ անդդայութիւնն է հոգեկան կարողութեանց աւօզութեամբը: Հոգեաեսութիւնն ալ հոգւոյ ինքնային յափշտակութիւնն է, ու սքանչացումը շատ անդամ հոգեաեսին յիշողութեանը մէջ չիմնալով:

Մարդկային բնութեան այս վիճակը կրնայ թէ ինքնին յառաջ գալ և թէ կենդանի մազնիստ բանութեան ցոյց տուած միջոցներով արհեստապէս ձեռք բերուիլ:

Սակայն թէ բնականապէս և թէ արհեստաբար գոյացած էսպիպի մէջ շատ երեւոյթներ կը ծնին զորս քննելու սրբաւոր եմք անփոփոխը փոփոխականէն զատելու համար:

1. Անփոփոխ և ընդհանրապէս առանց բացտուութեան աեսնուած երեւոյթը այն է, որ, էսպիպի մէջ իյնող անձինք որ և է ազդե ու կրօնէ որ ըլլան, առ հասարակ Աստուածապաշտական, խղճի, չերմեսանդութեան և պատկառանաց զպացումներով կը լեցուին և որոնք համայն մարդկութեան սրտին մէջ միօրինակ, նոյն, ու բնածին (inné) են:

2. Փոփոխականը և միշտ զանազանութեամբ աեսնուածն ալ այն է, որ նոյն անձին իւր տղայութեանէ ի վեր ընդունած յատուկ գրական կրօնին մասնաւոր սիղբունքները, նախապաշարութիւնը ու երեւակայութիւնները վերոյիշեալ բնական զպացմանց հետ խտանուելով իբր ստուգութիւն կ'երևին:

Պատմութիւնը մեզ կը ցուցնէ որ Միջին դարու մէջ այսպիսի բնական երեւոյթներ կրօզ բազմաթիւ կանայք, ինչպէս է Ժան ա'Արք, և այլն կենդանւոյն բոցերու տուած է հաւատաքննութեան ատեանը, չի կարծելով, այլ հաւատալով թէ ստատայէ ներդործուած են անոնք:

Ռերիշ կոյսեր ալ նոյն պատճառաւ ի դասս Արբոց բարձրացուցած է Հոովմի նախապաշարումը. սակայն վերջին դարու ողբի լիստփայութիւնը և անոր ընթացակից Անգամազնական գիտութիւնը ամեն սրբադայիւքը յայտնեց և մեկնեց հոգեաեսութեան խնդրոյն որպիսութիւնը ու զատեց դերբնականէն:

Թող Ռարիէ ԿՕՒանին թղթակիցը չկարմանայ երբ մեզ Ամասիացի եղբարքը կը յուզին ու կը վրդովին ծոմապահութիւններով ու սուղով, մեք կրնանք պատմութիւն ի ձեռին ցուցնել իրեն որ տակաւին մօտերս Տիրանայի մէջ ոամիկ ժողովուրդը ուխտի դիմեց խմբովին այս օրինակ հոգեաես աղջկանց սենեակը ու կատաւարութիւնը ստիպուեցաւ զանոնք ցրուելու:



Լուսաւորեալ աշխարհին հասուն սկզբանց մի միայն ընդունածը այն է թէ, “Մարդկային հոգւոյ կարողութիւնները մարմնաւոր աստիճաններէ անտեսել ևս կը զօրանան ու կը վերանան դէպ ի Առաքինութեան, Աստուածապաշտութեան և Աղօթքի զգացմանց, որոնք Արարչին մեր ներքը գրած հոգւոյն դաղանի կերպերն են”։ - Այս ախտը դարձանելու միջոցին դալով կը խրատեմք մեր Ամասիա ընակ Հայքը որ Էսթրաի մէջ իյնողները ասեն մը եկեղեցի չիտանեն ու ընտանիքէ, մանաւանդ կը նիկներէ հեռի պահեն, որովհետեւ ինչպէս յօրանջեը՝ նոյնպէս այս ախտն ալ փոխադրական է։ Հետեանքը բնաւ երկիրալի չէ ու ցուրտ ջուրը օդ տակար է։

Մեծ ծառայութիւն կընէ մեզ եթէ հաճի Ամասիացի որևէ հայ գրիչ մը երկարօրէն բայց առանց առաւելութեան հաղորդել մեզ այս հսկեատեութեան անցքերը. մեք պարտք ունիմք հաղորդել Գաղղիոյ Մէսմէրական ընկերութեան այսպիսի եղելութիւնը, ինչպէս և արդէն իսկ տեղի ունեցածները հաղորդեցինք։

Գ. Կարապետեան.  
Ա. Մ. Բ. Բ.

Հալէպ. 18 Հոկտեմբեր. 1862.

Արդոյ Շարաղիր - Տնօրէն .

Մասին պատուական լրագրին 333 րէ թուոյն մէջ Կ. Պօլիս բնակեալ բուն Բերիացի Մեծապատիւ Տ. Կիլիզայոս Տէր Մարգարեանին (Թէպէտե երբեմն է՝ Փափաղեան, Աշապեյեան, Տէրտէրեան) Սեպտ 16 թուականով նամակը տեսանք որ “արգար բարկութեամբ” յիշողութիւնը կորսնցուցած, գեռ Բերիայէն մեկնելու տալի մը չեղած, իւր քաղաքացիները մոռնալով, Արապկերցի և Զըմըշկիւմացի մեծի մտամբ պանդոկաբնակ ազնիւ վաճառական Եկաւեան, Սաղաթիէլեան, Բրուտեան, Գարաձայեան (մեկալները յիշողութենէս կը փախչին) յարգի անձերը կը յիշէ և ան ալ յոգնակիացնելով։ Բանի որ “Հայրենեաց նախանձն” է իւր գրչին շառժառիթը, կաղաչեմք իւր հայրենասիրութենէ որ բարեհաճի իրեննէրուն անունը տալու։ Կմանապէս, կը ինքզինք ալ որ փոխանակ դովելու Աղնիւ պարոն Յ. Ասիոնեան Հոովմէպազան Հայ երիտասարդը, որն որ մեր անբաղդութենէ բաւական ժամանակէ ՚ի

վեր վարժապետական պատուաւոր պաշտօնէն հրաժարելով՝ առեւտրական գործերով կզբաղի, փոխանակ իբր վարժապետ օրինակ բերելու զանիկա (Թերևս պահ մը պիտի զղջայ) և յարգի Պ. Աշոտ Գալֆայեանը անարդելու, թող հայրենեացը մայր գպրոցին Ռաբիինեանց ուսմանքին վարժապետները յիշէր, որմէ ազգը հարիւր հազար դահեկանէն աւելի տուգանք կրեց իւր հօրը և հօրեղբօրը շնորհիւր։ Եթէ չյիշէր “լա էր թէ լուէր”։ Արեմն մենք արգար յայտնութեամբ կը յարգորենք վերոյիշեալ “հայրենանախանձ” մեծապատիւ որ իւր բարկութիւնը սրբան ալ արգար ըլլայ, հետեանքին փաստարկ ըլլալը արդէն ՚ի պաշտօնէ իւր մերձական փորձած ըլլալուն ինքն ալ չփորձէ ու միանգամայն Տէրունեանց մեծարգոյ պատուելին “Փոքր քաղաքներուն մեծ սիրտ մարդիկը” անուն աշխատասիրութիւնը ի մտտասիրել հաճի. դուցէ ՚ի լոյս ընծայուած աւանը ինքը մանուկ ըլլալուն տեսած չէ, ինչպէս որ Օսլիէ պատուական հանգիսիք 44 րէ թուոյն մէջ հրատարակուած Բիւրքճիանօֆֆին նամակն ալ չտեսած ձեանալով ասրակուսանօք կը խօսէր։

Այս առթիւ երկու խօսք ալ Մասիի Մեծարգոյ խմբագրին կուզեմ՝ հաւատեցնելով որ Բիւրքճիանօֆֆին ազգասիրական ջանքը ու անձնանուիրութիւնը, բայց ՚ի մէկ երկու վասակայ ժառանգորդներէ, ընդհանուր հասարակութենէ երախտալի սրտիւ դովութեամբ ընդունուեր է և միշտ պիտոր ընդունուի, քանի որ յօգուտ ազգայնոցս է, և ՚ի հաստատութիւն բանիս կը հըրաւիրեմք զինքը արդէն պատրիարքարան ուղղուած բաղմունիք շնորհակալութեան նամակնիս աչքէ անցնելու։

Ա. Կարապետեան

Պէլէն. 3 Հոկ. 1862.

Իսկինտերունէն մեկնելով ողջամբ հասանք ՚ի Պէլէն, որ նոյն քաղաքէն երեք ժամ հեռաւորութիւն ունեցող զիւզ մ'է։ Հարիւր յիսուն տուն կայ հոս, որոնց հարիւրը Հայ ընտանիքներ են։ Գիշերը զիւղայիք բոլորտիքս հաւաքեցան և եռանդազին հետաքրքրութեամբ մը Սահմանագրութեան վրայ լուր ուղեցին իզմէ։ Կարելի եղածին չափ իրենց փափաքը յարկեցուցի, բայց “Սահմանագրութիւն” կաղաղակին միշտ և կըրնամ ըսել թէ Օմիւնիոյ մէջ այդչափ եռանդ չկայ։



Արժանայիշատակ Մի-նապիին բաժանորդներէն մէկ քանիին հետ տեսութիւն ըրի. անոր բանտարկութիւնը լրած էին, այլ չէին դիտեր տակաւին ազատուիլը: Արք պատմեցի իրենց եղելութիւնը, անհնարին տրամութեամբ, ուրեմն ալ զրկուելու ենք Մի-նապիին, ան, աւաղ քեզ, Մի-նապի, կըսէին իրարու և կը ցաւակցէին: “այսպէս ուրեմն, կըսէր մէկը, ճշմարտութեան դրօշակիրը մատնուեցաւ, յաղթուեցաւ, այսպէս ուրեմն, կըսէր միւսն ալ իւր ազգին թշուառութիւնը ողբացող հայրենասէրը վերջապէս ինք ևս գլորեցաւ նոյն թշուառութեան գուբը: Այս միա միա գիւղացուց բարոյական կացութիւնը ցաւալի է. մայրենի ընկունին զրեթէ կորսնցուցած են, գարոց մ’ունին, բայց ծնողք հարկաւոր եղած գրքերը գնելու անկարող ըլլալով իրենց զուակները դպրոցէն հանած են. կան ունեւոր անձինք որ մեծ փոյթ ունին իրենց զուակաց կրթութեանը: Այլեղեցիներն անշուք է, քանակուսի փայտեայ զանգակ մ’ունին զոր երեք անգամ միայն հնչեցընելու արտօնութիւն ունին:

Ազգասիրաց մասնաւոր ուշադրութեանը կարօտ են այս գիւղին հայերը, որք կրնան յառաջանալ, եթէ միջոցները ունենան, և աւելի թշուառանալ եթէ ազգասիրութիւնը չի հսկէ անոնց բարոյական վիճակին:

\* \*

Է Տ Ա Ի Ն Ր

Շարունակութիւն (1):

— Այդ խօսքերդ ինձի համար մահաբեր են, ըսի: Ա՛ղէ, պատասխան տուր ուրեմն. այն գոհութիւնը զոր իզմէ կուգես, պատուոյս կորուստն է: Դուն կրնես այս զոհողութիւնը, ըսէ, իմ հանգստութեան և, բա՛բէ, կենացս համար կընես այս զոհողութիւնը: Հասկցաւ անիկա թէ ինչ կը նշանակէին այս խօսքերս, ուստի “Ետուար, ըսաւ տարօրինակ ձայնիւ մը, դո՛ւն ես այսպէս հետս խօսողը”: Սենեակին միւս ծայրը գացի անթողի մը վրայ նետուեցայ: Կործեցի թէ ալ մահուանս կէտը հասնելու վրայ էր. այս խտալուր ձայնը իբր գաշոյն մը սիրտս ճղքած էր: Չիս այսպիսի թշուառ վիճակի մէջ տեսնելով քովս եկաւ և ուզեց ձեռքս բռնել: — Թող զիս, ըսի, ալ քիչ մը խելք մնացած է զլուխս, անկէ ալ

զրկուելուս պատճառ մի ըլլար”: Ոտք ելայ դուրս ելնելու համար, այլ անիկա չթողոց որ երթամ. — “Մէ, ըսաւ արտասուելով, ամենեին չպիտի հաւատամ թէ հոս պատիւս անարատ պահելու համար չիրնաս զսպել ինքզինքդ և դուրս ելնելու հարկաւորութիւնը ունենաս”! Ոտքերուն ինկայ և ըսի. — “Պաշտելի հրեշտակ, միշտ պիտի խնայեմ պատիւըդ և պիտի յարգեմ քեզի. բայց դո՛ւն ալ կը տեսնես, դուն ինքդ ալ շատ աղէկ կըզատ որ առանց քեզի չեմ կրնար ապրիլ! Չեմ կրնար քու կըզ ըլլալ, պէտք է ուրեմն մեռնիլ! մի երկընչիք այս ըսածէս, ուրիշ կեանքի մը մէջ պիտի միանանք անշուշտ, ո՛վ սրտիս սիրականը: Հո՛ն ալ գեղեցիկ, զմայլելի պիտի ըլլան, ինչպէս որ ես այս վայրկենիս մէջ: Պիտի դաս հոն միանալու համար բարեկամիդ, սիրականիդ հետ. սիրաբոյր խոստումներդ հոն պիտի կատարես, ըսէ, հանդերձեալ աշխարհին մէջ դո՛նէ իմ պիտի ըլլան: (1) — Ետուար, ըսաւ անիկա բուրբովին խըռովեալ, շատ աղէկ գիտես որ եթէ մեռնիս, ես ալ կը մեռնիմ, կեանքս քու սրտիդ մէջն է, առանց ինձի չես կրնար մեռնիլ”! : Թուեցուս մէջ գրկեցի զինքը, ամենեին գէմ չտրաւ ասոր, գլուխը ուսիս վրայ կրթնցուց, և “որչափ քաղցր էր ինձ մեռնիլ այսպէս, ըսաւ անիկա: — Ա՛հ, ըսի, աւելի քաղցր կըլլար այսպէս ապրիլը: Արկուբնիս ալ ազատ չէ՛ք. մէկու մը խոստացած և երգում ըրած չես նուիրել սիրտդ. ո՛վ ուրեմն կրնայ արգիլել մեր ամուսնութիւնը: Աստուած պիտի գլծայ մեր վրայ: Սրտիս վրայ գգուեցի զինքը: — Ետուար, ըսաւ անիկա, դո՛ւն ինքդ գլծա՛ ինձի, մի անպատուեր այն զոր կը սիրես! կը տեսնես որ քեզի դիմակալելու զօրութիւն չունիմ: Ազատէ՛ զիս, ազատէ՛! Բեղի երջանիկ ընելու համար եթէ միայն կեանքս պէտք ըլլար, շատ ատենէ՛ ի վեր արգէն կրնայի զոհել զայն, բայց նոյն իսկ դուն անմխիթար պիտի մնաս անպատուութեանս վրայ. ի՛նչ, կը մերժես կարգուիլ հետս և կուզես ուրեմն դձձե՛լ, նուաստե՛լ զիս: — Բան մը չեմ ուզեր, ըսի յուսահատօրէն, միայն մեռնի՛լ կուզեմ: Ա՛խ, եթէ դո՛նէ կարելի ըլլար զրկացդ մէջ մեռնիլ, և վերջին շունչս շուրթերուս վրայէն աւանդել! ”: Կուլար

(1) Իսեղճ երկտասարդ, ընկերային անհէգեղ պատշաճութեան մը կը զսէ իրական երջանկութիւնը, կը մտքէ իւր սիրուհիին նուէրը և իւր հիւանդատ երկակայութեամբը գերեզմանին մէջ կը փափաքի միանալ և վայելել սիրուհին յախտեանկան սիրով:

(1) Տես թիւ 48.



անիկա, ալ ինքզինքս չկրցայ զսպել, համարձակեցայ համբոյր մը քաղել իւր կենսատու շուրթերէն, զոր քանկցս անգամ մերժած էր: — Թեւերուս մէջէն բռնի փախաւ անիկա, իւր արցունքները, իւր լալագին ձայները և յուսահատութիւնը շատ սուղի նստեցուցին ինձ՝ այն վայրկենական երանութիւնը: Մտիպեց զիս որ դուրս ելնեմ սենեակէն: Հնազանդեցայ իրեն և գացի մտայ իմ սենեակը՝ տեսնելով որ մարդերու ամենէն դժբաղդըն եմ, բայց սիրաբորբոք զգայութիւնս երբէք այս աստիճան տիրած չէր իմ վրայ: Օգացեր էի թէ սիրուած եմ, տակաւին կողջագուրէի այն զոր կը սլաշաէի սրտագին: Մահուան երկիւղներու մէջ անդամ երջանիկ պիտի համարէի զիս այս յիշատակներով: Ամբողջ դիշերս սարսափելի յուզմունքով ու ասնջանքով անցուցի, սիրտս բոլորովին տակն ու վրայ եղած էր, ալ կորուսած էի նաև այն որոշ տեսութիւնը, որով մինչև հիմա զիս առաջնորդող պարտաւորութիւնս կը տեսնէի: Արհաւիրեցի իւրովի թէ ինչու չպիտի կարենայի ինձ կնութեան առնուլ Տիկին Տը Արվէրը. օրինակներ կը փնտռէի տկարութեանս իրաւունք տալու համար, կըսէի ինքնիրենս թէ խորին միայնութեան մը մէջ պիտի մտնայի աշխարհս ու պարսաւը, թէ եթէ հարկ ըլլար, անոր հետ Ամբիգա կը փախչէի, կը փախչէի նաև այն անբնակ կղզին, որ իմ հին մտածումներու առարկան էր: Օրերուս սիրուն ընկերուհին, բարեկամուհին, սրտիս ամենասիրելի թագուհին քանի որ քովս պիտի ունենայի, աշխարհիս ամեն կողմն ալ հեշտառիթ և երանաւէտ վայր մը պիտի երևար ինձ:

‘Աթալի’, ‘Աթալի’, այսպէս կը կրկնէի իւր անունը կիսահագագ ձայնիւ, որպէս զի այս երկու հնչիւնը տկանջս մոգէ և քիչ մը հանդարտէ զիս: Աստուտ եղաւ և քանի մը վայրկենէ ետքը նամակ մը բերին ինձ. ճանչցայ Տիկին Տը Արվէրի զիրը, ալ երեակայէ՛ ինչ որ պարտաւորեցայ զգալ երբ յետագայ նամակը կարգացի:

“Իմա Ատուար.

“Մի վախնար երբէք՝ կարծելով թէ պիտի յանդիմանեմ քեզի. այսպիսի կամք մը չունիմ. շատ աղէկ գիտեմ թէ ես ալ յանցաւոր եմ և դուցէ՛ քեզմէ աւելի յանցաւոր: Բայց դոնէ այս պատը թող մեզ ցուցընէ մեր առքերուն ներքև բացուած այն վիհը, ուր գահավիժելու վտանգէն ազատեցու ժամանակ ունինք դեռ: Եթէ ոսկաւ ինչ ևս գանդաղինք, այս վիհին մէջ պիտի թաղուի մեր երջանկութիւնն ալ, առաքինութիւնն

ալ: Ամենին չզոհենք այն զգայումները, որք մեր սիրտերը միացուցին: Ինչ որ կենաց մէջ բարի է, ինչ որ արդար, ճշմարիտ և վեհ է, անով մենք իրարու սիրաւ ճանչցանք և միացանք: Օգացինք թէ մի և նոյն լեզուն կը խօսէինք և փոխադարձաբար զիրար սիրեցինք: Ամխտենք ուրիմն հոգույ այն կատարելութիւնները, որոնց կը պարտաւորինք մեր սէրը և շիտանք երջանկանալ անմեղութեան մէջ և դո՛հ ըլլալ այն երջանկութեամբ զոր կրնանք վայելել Աստուծոյ առջև: Ատուար, ալ սէտք է, այս պէտք է միանալ կամ բաժնուիլ: Բաժնուիլ, կը կարծես թէ կարելի ըլլայ ինձ գրել այս խօսքը եթէ յատուցուց չզիտանայի թէ անհնարին է իւր հետեւութիւնը:

Ար պիտի գտնես այն զօրութիւնը որով կարող ըլլաս խոյս տալ իղմէ: Ար պիտի գտնեմ նաև ես այն զօրութիւնը, որով ինձ հնարին ըլլայ ապրիլ առանց քեզի:

Դո՛ւն, որ էութեանս կէտն ես, և առանց որոյ և ոչ իսկ օր մը չեմ կրնայ տանիլ կենաց, դուն ալ ինձի պէս միթէ չէ՞ս զգար թէ անբաժանելի ենք մենք:

Առջարկութիւնս մերժելու համար ինչ օրինաւոր պատճառ կրնաս ունենալ. — պատու ուրուական մը, որ բոլորովին անհիմն է: Մարդիկ դուցէ՛ քեզ պիտի պարտաւեն զիս հրապուրած ըլլալուդ համար. Է՛հ, սիրոյ հրապոյրքէն՝ ՚ի զատ ուրիշ ինչ հրապոյրք կրնայ ըլլալ երկու եակներու համար որք զիրար կը սիրեն: Մանաւանդ թէ ո՛չ աղաքէն ես եմ քեզի հրապուրողը: Եթէ քեզի սիրելու յայտնած չըլլայի, միթէ դուն ինձ պիտի խոստովանէիր քու սէրը: Բարե, նախապառիւ պիտի համարէիր մեռնիլ քան թէ յայտնել ինձ սէրդ: Ինչ է կամքդ — կուզես ատիճանէս չիջեցընել զիս, բայց կին մը սիրուած ըլլալու փառքէն, աստիճանէն և տխուրութեն ՚ի զատ ուրիշ ինչ փառք, աստիճան և տխուր կրնայ ունենալ: Դուն սրտիդ վրայ բաւական վստահութիւն չունին ուրիմն որ կը կարծես թէ այն՝ չպիտի կարենայ ինձ վերագարձնել ինչ որ կերեակայես թէ պիտի կորուսեմ քու պատճառաւ: Եթէ կրնաս, երեակայէ՛ այն երջանկութիւնը զոր պիտի վայելենք եթէ միանանք, և եթէ կը համարձակիս՝ ցաւէ՛ այն կարծեցեալ առաւելութեան վրայ զոր իղմէ կը յափշտակես: Ատուար, մեր խոջնդաւր միայն հայրս է, միւս ամեն արդեւքները բանի մը տեղ չեմ գտներ և մեզի անարժան կը գտնեմ զանոնք,



“Ար խոստովանիմ” թէ բոլորովին անյոյս չեմ օր մը իւր ներդրութեանը արժանանալու մասին : Այո՛, Աստուար, հայրս զիս կը սիրէ, նոյնպէս քեզի ալ կը սիրէ, և ո՛վ է այն որ չկարենայ սիրել քեզի : Ապահով եմ թէ հայրս բիւր անգամ ցաւած է քեզի իւր սրդին ընել չկարենալուն համար . դուն հաճելի ես իրեն, դուն կը հասկնաս անոր ինչ ողոյս աէր ըլլալը, դուն անոր սրտին որդին ես : Ա՛հ, միթէ իւր հինօրեայ բարեկամին զաւակը չեմ, բարեկամի մը որն որ ժամանակաւ անոր պատիւը և հարստութիւնը փրկած է : Աւրիմն կրնանք ստիպել հայրս որ երջանիկ ըլլայ մեր ունեւալիք որդիական հոգատարութիւններով, կըրնանք երջանկացնել զանիկա մեր կաթողին սիրովը : Այժմ աքորէ մեզի Բարիդէն, դէթ Ֆալեբանժի մէջ պիտի ընդունի : Հոն պիտի համարձակի զմեզ ճանչնալ թէ իւր զաւակներն ենք, հոն հայր պիտի ըլլայ մեզ՝ բնութեան կարգին մէջ և ոչ թէ ընկերային պատշաճութեանց կարգին մէջ, և սիրոյ տեւքը անոր մոռցնել պիտի տայ աւմէն բան : Ամենին մի վախնար : Միթէ չեմ զգար թէ ամէն բան մեզ հնարին պիտի ըլլայ երբ ալ իրարու հետ միացած պիտի ըլլանք : Ապահով եղիւր թէ ամէն բան հնարին է մեզ, երկու բան միայն անհնարին է և այն է՝ դադրել զիրար սիրելէ կամ ապրիլ առանց մեր սէրը իրարու յայանելու : Ընարէ, Աստուար, Համարձակէ երջանկութիւնը ընարելու, մ՛հ, մի մերժէր երջանկութիւնը . միթէ կը կարծես թէ ընելիք ընտրութեանդ հետեւութեան պտտասխանատու միայն դուն ըլլաս : Բարէ, չեմ տեսներ որ երկուքուս կեանքն ալ մի և նոյն թելէ կախուած է : Այժմ փախուստը ընտրես, մահը ընտրած պիտի ըլլաս, և քու մահուան հետ իմինս ալ” :

Տ Ե Ս Կ Ն Է Լ :

Այս նամակը կարգալուս պէս ծնկան վայ ինկայ և երգում ըրի կեանքս նուիրել Տիկին Տը Արվէրի, ուխտ ըրի սիրել, պաշտել և երջանկացնել զանիկա :

Այսպապա՛մ ուրախութեան մը մէջ ընկղմած էի, խղճիս բոլոր տաղանայները աներևութացած էին և երկնային երանութիւնը մինակ կը տիրէր սրտիս մէջ : Տիկին Տը Արվէր, կըսէի իւրովի, եղմէ շատ աւելի աղէկ կը ճանչնայ այն ընկերութիւնը ուր իւր կեանքը կանցունէ, զիտէ անիկա թէ այն մեզի համար ինչ վտանգ կրնայ ունենալ : Այժմ մեր միութիւնը հնարին կը թուի իրեն, ապա ուրեմն հնարին է, որչափ անմիտ մ’էի որ երջանկութիւնը

կը մերժէի՛ ! Մարեշալ ՏՕՐԸՆ պիտի ներէ անշուշտ՝ մեզ երջանիկ տեսնելով, օր մը պիտի օրհնէ երկուքնիս ալ : Իսկ Ապթալին, Ապթալին ալ իմ սիրուն ընկերուհիս, իմ ամենասիրելի կինս պիտի ըլլայ, բոլոր կեանքս անոր քով պիտի անցունեմ” : Բոլորովին մի սիրտ և մի հոգի ըլլալով : Այս հեշտալիք մաւածութեանց իշխանութեան ներքեւ կընկճէի, և արցունքներս միայն կրնային թելել թեւ այն ուրախութիւնը, որ իմ սրտի համար անհուն էր և սաստիկ, այն ուրախութիւնը որ կը յաջորդէր այնչափ գառն, խորին և վշտակիբ յուզմանց : Անհամբերութեամբ կսպասէի որ կէս օր ըլլար, վասն զի միայն այս ժամուս կրնայի՛ առանց կասկածի աեզի տալու՝ վարկեան մը Տիկին Տը Արվէրի բնակարանը երևալ և զանիկա մինակ դանել : Մինչև կէս օր ամենաքաղցը նպատակներով անցուցի ժամերս : Այսպիսի հեշտալիք զգացումով մը համակուած էի որ ամենևին ուրիշ խորհրդածութիւն մը չկրցի ընել և ուրախութիւնս խոռովել : ճակատագիրս սրտուած էր : Տիկին Տը Արվէրի ինչ շնորհած նախամեծարութիւնը զիս նոյն իսկ իմ առջև կը բարձրացնէր և տեսիլ մը, միայն տեսիլ մը մտքիս միւս ամէն աեսիլները կանհետէր : “Անիկա իմ պիտի ըլլայ, բոլորովին իմ պիտի ըլլայ ! Այժմ հարկ ըլլար մահուամբս դնել պոսպիսի երանութիւն մը, մահը թելթել փոխարէն մը երևած պիտի ըլլար ինչ՝ ընդունած երանութեանս նկատմամբ : Բայց մտածել թէ այն իմ կենաց երջանկութիւնը, շնորհքը, պարտաւորութիւնը պիտի ըլլայ, մ՛հ, ասոնք այնպիսի զգացումներ էին, զորոնք նկաբելու կամ բացատրելու համար երեակայութիւնը չկրնար դանել պէտք եղած զոյները կամ բառերը : Այսպիսի զգացմանց ինչ ըլլալը թող հասկնան անոնք որք զգացած են, իսկ անոնց ինչ ըլլալը չգիտցողներն ալ թող ցաւին, վասն զի առանց այսպիսի զգացմանց կամ այսպիսի զգացումներէ ետք ամէն բան ընդունայն և վերջանալի է կենաց մէջ ! Մեր ճակատագիրը այսպէս որոշելէ ետեւ՝ երկու օր անցաւ և այս երկու օրուան մէջ երջանկութեան ամէնէն անարատը վայելցինք :

Տիկին Տը Արվէր կաշխատէր ինչ ապացուցանելու թէ ես եմ զոհոյութիւններ ընողը և թէ ամենևին երախտագիտական պարտ մը չունէի իրեն՝ իւր երջանկութիւնը ուղած ըլլալուս համար, այնպիսի երջանկութիւն մը, առանց որոյ չէր կրնար ապրիլ անիկա : Որոշեցինք մէջերնիս որ նախ անիկա Հոլանտա երթայ Մայիսի մէջ : Այս ճամբորդութիւնը



կասկածի մը տեղի չտալու համար բնական պատ-  
 րուակ մը գտանք, որ էր երկար առնէն 'ի վեր  
 Տիկին Ս . . ի խոստացուած այցելութիւն մը :  
 Աս ալ իմ կողմէ Գորէզի մէջ կարգադրելու  
 գործեր ունենալը պատրուակ պիտի ընէի և տասն-  
 ևհինգ օրի չափ բացակայ ըլլալու ստիպուիլս յա-  
 ուաջ պիտի բերէի : Տիկին Տը 'Արվէրը գտնելու  
 համար գաղտնապէս Ասէյ պիտի երթայի, ուր  
 դեսպանատան մատրանապետը մեզ պիտի պրակէր :  
 Օտերունի քահանայ մ'էր անիկա զոր կը ճանչնար  
 արդէն Տիկին Տը 'Արվէր և որուն հաւատարմութիւնը  
 վրայ բոլորովին վստահ էր : Այսպէս պսակուե-  
 լէ ետև եթէ վերագտնայինք, զիրար տեսնելու  
 և ամենին կասկածի տեղի չտալու համար հազար ու  
 մէկ միջոցներ ունէինք : Այսօր երբ կը մտածեմ թէ  
 ինչ խախուտ հիմերու վրայ կանգնած էր երջան-  
 կութեանս շէնքը, կը զարմանամ թէ ինչպէս  
 բոլորովին ապահով կրցեր եմ յանձնառու ըլլալ  
 զայն վայելելու, նաև մէկ վայրկեան : Բայց սերը  
 իւր բոլորտիքը տեսլական աշխարհ մը կստեղծէ :

Ամէն բան ուրիշ կանոններով կը դատուի .  
 համեմատութիւնները կը մեծնան, երևութականը և  
 հասարակայինը կաներևութանս կենաց ասպարէ-  
 զէն, մարդ կը կարծէ թէ ուրիշներն ալ կարող են  
 ընելու այն զոհողութիւնները, զորս ինք պիտի ը-  
 նէ, և երբ իրական աշխարհը իւր ցուրտ արամա-  
 խոհութեամբը կը ներկայի իրեն, ցաւալի զարմա-  
 ցում մը կպատճառէ : Առաւօտ մը Տիկին Տը 'Ար-  
 վերի բնակարանը երթալու պատրաստուելու ատեն,  
 մօրեղբայրս պարոն Հերպլո սենեակս մտաւ : Մա-  
 րեշալ Տ.Օլոնի աքսորմանէ 'ի վեր քիչ անդամ  
 տեսածէի զինքը . այն ժամանակները այնպիսի  
 ընթացք մը ունեցած էր անիկա որ ևս առաւել  
 աւելցած էր իր և իմ մէջ եղած այն պաղուծիւնը,  
 որով անորմէ հեռանալ կըզայի : Կարծելով թէ  
 իմ պարտաւորութիւնն էր մօրեղբորս հետ չաւրուիլ,  
 ժամանակ առ ժամանակ իրեն այցելութիւն կընէի :  
 Միշտ աղէկ կը վարուէր հետս, բայց զրեթէ  
 երէք շարաթէ ի վեր զինքը տեսած չէի : Աերս  
 մտած ժամանակ այնպիսի զուարթալի և ծաղրածու  
 կերպարանք մը ունէր, ուսկէ միշտ կը հասկցուէր  
 թէ անիկա զայթակղեցուցիչ դէպք մը ունի  
 պատմելու : Այս տեսակ խօսակցութենէ հաճութիւն  
 կըզար անիկա և այնպիսի միամտութիւն մը կը  
 ցուցընէր խօսակցելու ատենը որ այն արեւի տհաճոյ

էր ինձ քանթէ իւր համարձակ չարամտութիւնը,  
 վան զի մոլութեան մէջ միամտութիւն և բարի  
 սիրտ մը ունենալը ապականութեան յետին աստի-  
 ճանն է :

Հարոնայիլէ :

ՍԿՐՅՈՒՆՔ

ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

ՀԱՏՈՐ Բ.

ԹԱՐԳԻՄԱՆԵԱՅ ԻՏԱԼԵՐԵՆՆ

ԽԱՉԱՏՈՒ Բ. ԻՌԻԻՏԵԱՆ

Այս պատուական և կարևոր զրբին առաջին  
 հատորը արդէն հրատարակուած է և թէ և զայն  
 տեսած չենք, բայց կը լենք թէ ազգային դպրոց-  
 ներու մէջ ընդունելութիւն գտած է . երկրորդ  
 հատորը տեսնելու և աչքէ անցընելու առիթը  
 ունեցանք այս անգամ . զրբին ընտրութիւնը,  
 թարգմանութեան մարքրութիւնը պատիւ կը բերէ  
 Արզոյ թարգմանչին, զինը 10 դահեկան է :

ՏԵՃԵՐ ՄՈՒՍԵՅԻՑ

Այս անուամբ հրատարակուած տետրակներն  
 ալ որք յառաջ երեքական դահեկանի կը ծախ-  
 ւէին, հիմա 'ի շնորհս ընթերցասիրաց 1 դահեկանի  
 սկսանծախուել Պօլոյ մէջ :

ՀԵՐԵԳԻՐ - ՏՆՕՐԻՆ

Գ. ՉԻՂԻՆԿԻՐԵԱՆ

Ջ Մ Ի Ի Ռ Ն Ե

Ի ՏՊԱՐԱՆԻ ՏԷՏԷԱՆ